

**Մարտական գործողությունների մասնակիցների
կյանքի իմաստալից կողմնորոշումների և մահվան նկատմամբ
վերաբերմունքի առանձնահատկությունները**

*Ավագիմյան Հայկ,
Մարգարյան Մանե,
Ղանաղյան Ավետիք*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-292>

Հանգուցային բառեր. *Էրզիստենցիայ արժեքներ, կյանքի իմաստ, մարտական սթրես, տրավմատիկ սթրես, պատերազմի մասնակիցներ, անձնային աճ*

Նախաբան

Հողվածի նպատակն է բացահայտել, թե պատերազմի փորձառությունները ինչպես են ձևավորում անհատական արժեքային համակարգը, կյանքի իմաստի ընկալումը և մահվան նկատմամբ հոգեբանական վերաբերմունքը: Հետազոտությունն արդիական է նրանով, որ մարտական գործողությունների մասնակիցների կյանքի իմաստի որոնումը և մահվան նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը կարևոր դեր ունեն նրանց հոգեկան բարօրության և հետպատերազմյան սոցիալական ինտեգրման մեջ և օգնում են բացահայտելու հոգեբանական աջակցության ուղիները՝ նպաստելով նրանց հարմարվողականությանը և կյանքի որակի բարելավմանը: Հետազոտության խնդիրներն են.

1. Բացահայտել մարտական գործողությունների մասնակիցների կյանքի իմաստալից կողմնորոշումների ձևավորման առանձնահատկությունները:
2. Ուսումնասիրել նրանց վերաբերմունքը մահվան նկատմամբ և դրա հոգեբանական գործոնները:
3. Վերլուծել կյանքի իմաստի և մահվան նկատմամբ վերաբերմունքի փոխազդեցությունը մարտական փորձառության համատեքստում:

Ուսումնասիրության շրջանակներում կիրառվել են հոգեբանական թեստավորում, որակական և քանակական վերլուծության մեթոդներ՝ մասնակիցների աշխարհընկալման առանձնահատկությունները գնահատելու համար:

Հետազոտության հիմնական մեթոդիկաներն են՝ Դ. Ա. Լեոնտևի «Կյանքի իմաստալից կողմնորոշումների» ախտորոշման մեթոդիկան և Տեմպլերի «Մահվան անհանգստության» սանդղակը: Մարտական գործողությունների մասնակիցների՝ մահվան նկատմամբ վերաբերմունքը և կյանքի իմաստալից կողմնորոշումների ուսումնասիրության գիտական նորույթը այն է, որ այն կարող է օգնել մարտական գործողությունների մասնակիցների ավելի արդյունավետ և արագ ադապտացիային տրավմատիկ սթրեսից հետո, հասկանալ այն մեխանիզմներն ու գործընթացները, որոնք ոչ միայն օգնում են արագ վերականգնվել տրավմատիկ իրադարձություններից հետո, այլև հասնել անձնային աճի՝ քաղելով պոզիտիվ փորձ անցած տրավմատիկ իրադարձությունից:

Արդյունքները ցույց են տալիս, որ մարտական փորձ ունեցող անձանց մոտ կյանքի իմաստի ընկալումը հաճախ վերաիմաստավորվում է, իսկ մահվան ընկալումը կարող է դրսևորվել ինչպես ընդունման, այնպես էլ դրա հանդեպ վախի կամ անտարբերության դրսևորումներով:

Ներածություն

Մարտական գործողությունների մասնակիցների բախումը մահվան հետ երկակի ազդեցություն է ունենում նրանց հոգեբանական վիճակի վրա. այն մի կողմից կարող է գոյություն չունենալու և կյանքի ավարտի սարսափ սերմանել մարտիկների մոտ, իսկ մյուս

կողմից իմաստավորել նրանց կյանքը՝ դարձնելով այն ավելի բովանդակալից: Անձը, ենթարկվելով տրավմայի, սկսում է փոխել իր պատկերացումները կյանքի նկատմամբ, տրավման սկսում է հակասել կյանքի վերաբերյալ անձի պատկերացումներին: Ձինվորականները, պատերազմական ծայրահեղ պայմանների ազդեցությանը ենթարկվելուց հետո վերադառնալով բնականոն կյանք, հաճախ չեն կարողանում հարմարվել խաղաղ պայմաններին. պատերազմական սուր տրավմատիկ փորձի արդյունքում նրանք իրենց հիշողության մեջ ունենում են տրավմատիկ իրադարձության անընդհատ կրկնություններ՝ ֆլեշբեքերի և մոձավանջների տեսքով: Լինում են նաև դեպքեր, երբ զինվորականները, տրավմատիկ փորձ ունենալու հետ մեկտեղ, ունենում են նաև դրական հոգեբանական փոփոխություններ: Նրանք սկսում են նոր և դրական ուղով ուղղորդել իրենց կյանքը, կյանքը համարել ավելի իմաստալից, սկսում են ընկալել կյանքի նոր հնարավորությունների մասին, առաջ քաշել նոր նպատակներ և փորձում են հասնել այդ նպատակներին: Այսպիսով, մարտական գործողությունների տրավմատիկ փորձը մարտիկների մոտ կարող է առաջ բերել և՛ հետ-տրավմատիկ սթրեսային խանգարում, և՛ հետտրավմատիկ անձնային աճ՝ կապված նրա հետ, թե ինչպես մարտիկները, անմիջականորեն բխվելով մահվան խնդրի հետ, կամ չեն կարողանում հարմարվել կյանքի նոր պայմաններին, կամ սկսում են վերաիմաստավորել իրենց կյանքը և վերաբերմունքը մահվան նկատմամբ:

Մարտի արտակարգ իրադրությունը՝ կյանքի համար ակնհայտ վտանգի առկայության դեպքում, հուզական ոլորտի վրա ներգործության մեծ հաճախականության պատճառով ոչ միշտ է գիտակցվում, սակայն պարտադիր ընկալվում է մարդու կողմից, և այդ ընկալումները իրենց ազդեցությունն են թողնում նրա անձի վրա, շրջապատող մարդկանց հետ նրա միջանձնային հարաբերությունների վրա և նրա էքզիստենցիալ իմաստների վրա:

Մեր հետազոտության նպատակն էր՝ ուսումնասիրել մարտական գործողությունների մասնակիցների վերաբերմունքը կյանքի և մահվան նկատմամբ մարտական գործողություններից հետո:

Մեր հոդվածի համար տեսական և գործնական հիմք են ծառայել էքզիստենցիալ-հումանիստական ուղղության հոգեբանների և հոգեթերապևտների (Ռ. Ասաջոլի, Ջ. Բյուջեն-թալ, Ի. Յալոմ, Ռ. Մել, Վ. Ֆրանկլ և այլք) տեսությունները և հետազոտությունները, որոնք հաճախ մահվան հետ հանդիպումը դիտարկում էին որպես անձնային աճի կարևոր հնարավորություններից մեկը:

Հետազոտության վարկածն է. ենթադրվում է, որ մարտական գործողություններին մասնակցած և չմասնակցած զինծառայողների մոտ կյանքի և մահվան նկատմամբ վերաբերմունքը տարբերվում է:

Առաջադրված վարկածը փորձնական ճանապարհով ստուգելու համար կիրառել ենք Դ. Ա. Լեոնտևի «Կյանքի իմաստալից կողմնորոշումներ» ախտորոշման մեթոդիկան և Դ. Տեմպլերի «Մահվան անհանգստության» սանդղակը, որոնք Վ. Ֆրանկլի նկարագրության մեջ արտացոլում են ձգտում կյանքի իմաստին:

Հիմնական մաս

Հետազոտողների լայն շրջանակին հետաքրքրում է այն, թե ինչպիսի աշխարհայացք, արժեքային կողմնորոշումներ և դիրքորոշումներ ունեն մարտական գործողությունների մասնակիցները: Դա պայմանավորված է նրանով, որ գնալով աճում է մարտական հոգեկան տրավմայի անբարենպաստ հետևանքները կրող մարտիկների թիվը:

Ժամանակակից մարտը համարվում է մարտիկի ֆիզիկական և հոգևոր ներուժի, կյանքի համար ծայրահեղ անբարենպաստ գործոնների ազդեցությանը ակտիվորեն դիմակայելու, կամքը և վճռականությունը պահպանելու և իրեն հանձնարարված մարտական առաջադրանքը կատարելու կարողության ծանր փորձություն: Միևնույն ժամանակ այն իրենից ներկայացնում է կատաղի պայքար՝ հակառակորդ կողմերի զինվորականների

նպատակների, դրդապատճառների, համոզմունքների, տրամադրությունների, կամքի և մտքերի միջև [5]:

Ներկայումս մեծ կարևորություն է տրվում յուրաքանչյուր զինծառայողի անձնային առանձնահատկություններին, այսինքն՝ նրա ներքին հոգեբանական կողմին: Ջինծառայողի անձը հոգեբանական տեսանկյունից դիտարկվում է հիմնական հոգեբանական հատկությունների էության միջոցով, որոնցից են ուղղվածությունը, խառնվածքը, բնավորությունը և ընդունակությունները, անձի կամային և հուզական որակները, դրական և բացասական սովորությունները, զինծառայողի ռազմական մասնագիտական դաստիարակությունը, որն արտացոլվում է նրա կարգապահության մեջ [7]:

Մարտական գործողություններին մասնակցելն անվերապահորեն ազդում է մարդու գիտակցության վրա՝ ենթարկելով նրան որակական լուրջ փոփոխությունների: Պատերազմի բազմաթիվ հետևանքների մեջ (տնտեսական, քաղաքական, սոցիալական) ոչ պակաս կարևոր են էրզիստեսցիալ հոգեբանական հետևանքները: Էքստրեմալ պայմաններում մնալը բնութագրվում է մարդու հոգեկանի վրա աճող սթրեսային գործոնների ազդեցությամբ: Մարտական սթրեսը մարտական իրավիճակում անհատի բազմագործոն ադապտացիայի բարդ գործընթաց է: Սթրեսային գործոնների ազդեցության տևողությունը, ինչպես նաև հոգետրավմատիկ բնույթը կարող են նպաստել մտավոր գործունեության փոփոխությունների առաջացմանը, որոնք նվազեցնում են կյանքի արդյունավետությունը նույնիսկ խաղաղ պայմաններում: Անհատի մասնակցությունը մարտական գործողություններին հանգեցնում է նրան, որ սոցիում տեղափոխվելուց հետո անհատի սոցիալական վիճակը բնութագրվում է այսպես կոչված ինքնության ճգնաժամով, այսինքն՝ ամբողջականության կորստով և նրա սոցիալական դերի նկատմամբ հավատի կորստով: Մա դրսևորվում է մարտիկների՝ սոցիալական բարդ փոխազդեցություններում օպտիմալ դրսևորվելու ունակության խախտմամբ: Այդ մարդկանցից շատերը կորցնում են հետաքրքրությունը հասարակական կյանքի նկատմամբ, սկսում է նվազել նրանց ակտիվությունը նույնիսկ սեփական կենսական խնդիրների լուծման գործում: Հաճախ նրանց մոտ առաջանում է կարեկցանքի կորուստ, բայց և հաճախ նրանք ունենում են այլ մարդկանց հետ հուզական մտերմության կարիք:

Մարտական գործողությունների մասնակիցները դժվարություններ են ունենում քաղաքացիական կյանքի պայմաններին հարմարվելու գործընթացում: Օպտիմալ սոցիալական շփումները պահպանելու անկարողությունը ազդում է ինչպես ընտանեկան, այնպես էլ սոցիալական այլ հարաբերությունների վրա (ընկերական, աշխատանքային և այլն): Դրա հետ կապված՝ հաճախ ռազմական գործողություններին մասնակցած անձանց գրեթե կեսը ունեն դժգոհություններ՝ կապված նրա հետ, որ չեն կարողանում ըմբռնում գտնել ոչ հասարակությունում, ոչ էլ իրենց ընտանիքներում:

Մարտիկները մարտական գործողությունների ժամանակ, ապրում են սուր հոգեբանական դրամա: Այն ամենից հետո, ինչ նրանք ապրել են պատերազմում, մարտիկներն այնպիսի կտորով փոփոխություններ են ունենում իրենց հոգեվիճակում, որ նույնիսկ ծնողները երբեմն դժվարանում են ճանաչել նրանց: Օայրահեղ պայմանների ազդեցությանը ենթարկվելուց հետո վերադառնալով բնականոն կյանքին՝ զինվորականները դժվարանում են հարմարվել խաղաղ պայմաններին: Վախը, ագրեսիվությունը և կասկածամտությունը շատերի համար դառնում են կյանքի մշտական ուղեկիցներ: Հարկ է նշել նաև, որ մարտիկների հարմարումը քաղաքացիական կյանքի պայմաններին հաճախ ընթանում է նրանց և հասարակության միջև լարված հարաբերություններով:

Պատերազմի մասնակիցները միշտ չէ, որ հետապնդում են միննույն նպատակը, պատերազմը կարող է լինել միջոց՝ բավարարելու իրենց սպանության բնագրը կամ կարող է վեր հանել նախկինում ունեցած տրավման առաջացնել սպանելու հաճույք, զինծառայողները պարտադիր չէ, որ ունենան ակնհայտ հոգեկան խնդիրներ, որ համարվեն մարդա-

սպաններ ու չմասնակցեն մարտական գործողություններին: Մարտական գործողություններին մասնակցում են տարբեր բնավորության շեշտվածություն ունեցող անձինք, որոնք կարող են ունենալ տարբեր տրավմաներ, որոնք էլ պատերազմական տարբեր իրավիճակներում կարող են գլուխ բարձրացնել [1]:

Հետտրավմատիկ սթրեսային խանգարում (ՀՏՄԽ) ունեցող զինծառայողների շրջանում օտարվածության գերակշռող ձևերն էին անգործության զգացումը և հասարակական ոլորտում կյանքի իմաստի կորստի ընկալումը: ՀՏՄԽ ունեցող զինծառայողների մոտ կյանքի իմաստի կորուստը դրսևորվում էր անգործության հակազդման ձևերով՝ ինքնամեղադրանքի գաղափարներով և կամային ակտիվության նվազմամբ, վեզետատիվ դրսևորումներով՝ անզեղոնիայի (ուրախության զգացման կորստի) հակվածությամբ և մոտիվացիայի բացակայությամբ, ինչպես նաև նիհիլիզմով՝ արժեքային-իմաստային ոլորտի խախտումներում և դետրոնկտիվ (կործանարար) դիրքորոշումների ձևավորմամբ: Կյանքի կորցրած իմաստը վերագտնելու համար լավ կանխատեսվող գործոններ էին բարեկեցիկ հարաբերությունները և ընտանիքում հաղորդակցվելու ձգտումը [3]:

Մարտական գործողությունների մասնակիցների կյանքի փորձը եզակի է. այն կտրուկ տարբերվում է այն մարդկանց կյանքի փորձից, ովքեր չեն մասնակցել մարտական գործողություններին: Մարտական գործողությունների մասնակիցները խաղաղ կյանքին մոտենում են առաջնագծի չափանիշներով և մարտական վարքագիծը տեղափոխում խաղաղ պայմաններ, թեև հոգու խորքում հասկանում են, որ դա անընդունելի է: Կոմբատանտները առաջնագծի պայքարից հետո, խաղաղ ժամանակներում ունեցած կոնֆլիկտների և հակամարտությունների ժամանակ, երբ «թշնամին» ֆորմալ առումով այդպիսին չէ, հաճախ դժվարանում են իրավիճակի հոգեբանական ընկալման առումով, քանի որ նրանց մոտ զարգացել է ակնթարթային և ուժեղ հակազդեցությունը ցանկացած վտանգի նկատմամբ: Նախկին զինվորականներից շատերը դժվարանում են զսպել իրենց տարբեր իրավիճակներում, հաճախ նույնիսկ դժվարանում են հրաժարվել զենք վերցնելու սովորությունից: Ոմանք սկսում են հարմարվել՝ փորձելով առանձնանալ հասարակությունից: Կան մարդիկ, որոնց չի հաջողվում դուրս գալ այդ վիճակից, և նրանք մնում են «հավերժ կոփոներ»: Այս ամենը կապված է նրանց անհատական առանձնահատկություններից, ինչպես նաև այն պայմաններից, որոնցում նրանք հայտնվում են պատերազմից վերադառնալուց հետո: Վ. Ֆրանկլը նշում էր, որ չկա համընդհանուր կյանքի իմաստ, գոյություն ունեն միայն անհատական իրադրությունների յուրահատուկ իմաստներ [9]:

Հարկ է նշել, որ մարտական գործողությունների կոնկրետ պայմանների հակասական ազդեցությունը դրա մասնակիցների հոգեբանական վիճակի վրա շարունակում է ազդել նրանց վրա ռազմական գործողությունների ավարտից դեռ երկար ժամանակ անց: Անհատական փոփոխությունները, որոնք տեղի են ունենում զինվորի մոտ մարտական գործողությունների ժամանակ, ծանրջելի են:

Զինվորական ծառայության տրավմատիկ փորձը զինվորական անձնակազմի մեծամասնության մոտ առաջացնում է հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ, ինչպիսին է հետտրավմատիկ սթրեսային խանգարումը, որը կապված է բացասական երկարաժամկետ արդյունքների հետ [8]:

Սակայն կյանքի դժվար իրավիճակները կարող են նպաստել նաև դրական փոփոխությունների փորձին, որոնք դրսևորվում են նոր հնարավորությունների ընկալմամբ՝ կապված այլ մարդկանց հետ, կենսունակության բարձրացման, հոգևոր վերափոխման, բարենպաստ ապագայի գիտակցված կողմնորոշման մեջ: Տրավման մի բան է, որը հակասում է մարդու կյանքի պատկերացումներին, իր մասին պատկերացումներին, ինչը ոչնչացնում է աշխարհի մասին նրա ներքին պատկերը, սա դրդում է մարդուն վերաիմաստավորել կյանքը, վերափոխել քննադատական փորձը: Աճը չի առաջանում ուղղակի վնասվածքի հետևանքով, այն ավելի շուտ համարվում է տրավմայից հետո նոր իրականության հետ անհատի պայքար,

որը կարևոր է հետտրավմատիկ աճի չափը որոշելու համար: Այս իրավիճակի ելքը ամբողջությամբ կախված է մարդուց, թե որքանով նա պատրաստ կլինի դիմակայել իրադարձությանը և ինչ ձևերով է դա անելու: Կարող ենք ասել, որ հստակ բացասական իրադարձությունների միանշանակ դրական գնահատումը կարող է լինել հոգեբանական պաշտպանության հետևանք [4]:

Կյանքի իմաստն առավել ազնիվ և վսեմ է այն մարդկանց համար, ովքեր, գրկված լինելով գործի, ստեղծագործության կամ սիրո մեջ իմաստ գտնելու հնարավորությունից, իրենց ծանր դրության նկատմամբ ունեցած վերաբերմունքի միջոցով վեր են բարձրանում դրանից և գերազանցում իրենց սահմանները: Կարևոր է այն դիրքորոշումը, որը նրանք ընտրում են՝ մի դիրքորոշում, որը հնարավորություն է տալիս ծանր իրավիճակը վերածել ձեռքբերման, հաղթանակի և հերոսության [9]:

Հետազոտության ընտրանքը

Հետազոտությունն իրականացվել է 60 արական սեռի ներկայացուցիչների հետ, որոնցից 20-ը մասնակցություն են ունեցել 1990-ականների Արցախյան ազատամարտին, 20-ը՝ 2020 թ.-ի 44-օրյա Արցախյան պատերազմին, 20-ը անցել են զինվորական ծառայություն, բայց չեն ունեցել մասնակցություն պատերազմին:

Հետազոտության մեթոդիկաները

1. Դ. Ա. Լեոնտևի «Կյանքի իմաստալից կողմնորոշումների ախտորոշման մեթոդիկան» [6],
2. Դ. Տեմպլերի «Մահվան անհանգստության» սանդղակը [2, 10]

Փորձարարական վերլուծություն

Աղյուսակ 1

Կյանքի իմաստալից կողմնորոշումների ախտորոշման ցուցանիշները 90-ականների, 44-օրյա պատերազմի մասնակիցների և պատերազմի չմասնակցած անձանց մոտ

<i>Սանդղակ</i>		<i>90-ականների պատերազմին մասնակցած</i>	<i>44-օրյա պատերազմին մասնակցած</i>	<i>Պատերազմին չմասնակցած</i>
Նպատակները կյանքում	Բարձր	45 %	20 %	40 %
	Միջին	40 %	30 %	50 %
	Ցածր	15 %	50 %	10 %
Կյանքի գործընթաց	Բարձր	20 %	55 %	40 %
	Միջին	50 %	20 %	50 %
	Ցածր	30 %	25 %	10 %
Կյանքի արդյունավետություն	Բարձր	35 %	40 %	45 %
	Միջին	50 %	25 %	45 %
	Ցածր	15 %	35 %	10 %
Վերահսկողության լուկուս	Բարձր	60 %	15 %	50 %
	Միջին	25 %	50 %	40 %
	Ցածր	15 %	35 %	10 %
Վերահսկողության վայր (Կյանք)	Բարձր	50 %	35 %	60 %
	Միջին	35 %	45 %	25 %
	Ցածր	15 %	20 %	15 %
Ինտեգրալ ցուցանիշ	Բարձր	50 %	25 %	55 %
	Միջին	35 %	40 %	35 %
	Ցածր	15 %	35 %	10 %


Աղյուսակ 1-ից երևում են տարբեր սանդղակներով գնահատված կյանքի իմաստալից կողմնորոշումների ախտորոշման ցուցանիշները՝ համեմատելով 90-ականների պատերազմի, 44-օրյա պատերազմի մասնակիցների և պատերազմի չմասնակցած անձանց տվյալները:

Ինչպես տեսնում ենք կյանքի իմաստալից կողմնորոշումների հետազոտության արդյունքներից, 90-ականների պատերազմի մասնակիցների մոտ ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են վերահսկողության լրկուս – Ես (ես կյանքի տերն եմ) ենթամասշտաբում (60 %), որը անձին բնութագրում է որպես ուժեղ անհատականություն, ով ընդունակ է կառավարել սեփական կյանքը, սեփական կյանքը կառուցել՝ նպատակների և դրա իմաստի մասին պատկերացումներին համապատասխան: 44-օրյա պատերազմի մասնակիցների մոտ ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են կյանքի գործընթացի ենթամասշտաբում (55 %), ըստ որի՝ անձը կյանքի միակ իմաստը համարում է ապրելը, նա ապրում է այսօրվա համար՝ խուսափելով տառապանքից, ըստ դրա՝ անձն իր կյանքը համարում է իմաստալից:

Պատերազմական գործողություններին չմասնակցած, բայց զինվորական ծառայություն անցած անձանց մոտ ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են՝ վերահսկողության վայր-կյանք կամ կյանքի կառավարելիության ենթամասշտաբում (60 %), ըստ որի՝ նրանք ունեն համոզմունք, որ մարդուն տրված է վերահսկել սեփական կյանքը, ազատորեն որոշումներ կայացնել և իրականացնել դրանք: Ընդհանուր ինտեգրալ ցուցանիշների համաձայն՝ կյանքի իմաստալից կողմնորոշումների բարձր ցուցանիշներ են գրանցվել 90-ականների պատերազմի մասնակիցների (50 %) և պատերազմին չմասնակցած անձանց մոտ (55 %), իսկ 44-օրյա պատերազմի մասնակիցների մոտ՝ գրանցվել են միջին ցուցանիշներ (40 %):

«Կյանքի իմաստալից կողմնորոշումների ախտորոշման» մեթոդիկայի կիրառման արդյունքում կարող ենք կատարել հետևյալ հոգեբանական մեկնաբանությունը. Ենթադրվում է, որ 90-ականների պատերազմի մասնակիցների մոտ կյանքի իմաստալից կողմնորոշումների բարձր ցուցանիշը պայմանավորված է պատերազմի հաղթական ավարտով, ինչպես նաև նրանց տարիքային առանձնահատկություններով, կյանքի անցած ճանապարհով և կյանքի փորձով: 44-օրյա պատերազմի մասնակիցների մոտ զգալիորեն ավելի ցածր ցուցանիշներ են գրանցվել, ինչը, հնարավոր է, կապված է պատերազմից ստացված հոգեբանական ծանր բեռի հետ: Պատերազմին չմասնակցած անձանց մոտ բարձր ցուցանիշներ են նկատվում վերահսկողության վայրի և կյանքի իմաստի զգացման բառումով, ինչը կարող է պայմանավորված լինել կյանքի կայունությամբ և մարտական գործողություններին չմասնակցելու հանգիստ վիճակով:

Ինչպես տեսնում ենք, մահվան անհանգստության սանդղակի կոգնիտիվ-աֆեկտիվ մտահոգվածության և ֆիզիկական փոփոխությունների նկատմամբ մտահոգվածության գործոններում ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են 44-օրյա պատերազմի մասնակիցների մոտ, ըստ որի՝ նրանք ունեն մահվան վերաբերյալ մտքեր, պատկերացումներ, մտապատկերներ, գաղափարներ, ինչպես նաև ունեն մտահոգվածություն՝ կապված ֆիզիկական փոփոխություններ կրելու հետ: Մահվան անհանգստության սանդղակի՝ ժամանակի ընթացքի գիտակցման գործոնում ամենաբարձր միավորները գրանցվել են պատերազմին չմասնակցած, բայց զինվորական ծառայություն անցած անձանց մոտ, ըստ որի՝ նրանք գիտակցում են, որ կյանքը կարճ է, և ժամանակը շատ արագ է ընթանում, և դրա հետ է կապված նրանց անհանգստությունը մահվան նկատմամբ: Արդեն 90-ականների պատերազմի մասնակիցների մոտ մահվան անհանգստության սանդղակում ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են ցավի և սթրեսի նկատմամբ մտահոգվածության գործոնում, ըստ որի նրանց՝ մահվան նկատմամբ անհանգստությունը կապված է այն մտահոգվածության հետ, որ կարող են ցավի կամ սթրեսային վիճակի մեջ հայտնվել կամ մահանալ ցավալի մահով:



Տրամադիր 1. Մահվան նկատմամբ անհանգստության ցուցանիշները 90-ականների, 44-օրյա պատերազմի մասնակիցների և պատերազմի չմասնակցած անձանց մոտ

Ընդհանուր եզրակացության համաձայն՝ կյանքի իմաստալից կողմնորոշումների ցուցանիշները տարբեր են 90-ականների պատերազմի, 44-օրյա պատերազմի մասնակիցների և պատերազմի չմասնակցած անձանց միջև: 90-ականների պատերազմի մասնակիցները ցուցաբերել են ավելի բարձր մակարդակներ վերահսկողության լուրտում և ընդհանուր ինտեգրալ ցուցանիշներում, ինչը կարող է կապված լինել հաղթանակի, կյանքի փորձի և տարիքային առանձնահատկությունների հետ: 44-օրյա պատերազմի մասնակիցների մոտ զգալիորեն ավելի ցածր ցուցանիշներ են գրանցվել, ինչը, հնարավոր է, կապված է պատերազմից ստացված հոգեբանական ծանր բեռի հետ: Պատերազմի չմասնակցած անձանց մոտ բարձր ցուցանիշներ են նկատվում վերահսկողության վայրի և կյանքի իմաստի զգացման առումով, ինչը կարող է պայմանավորված լինել կյանքի կայունությամբ և մարտական գործողություններին չմասնակցելու հանգիստ վիճակով:

Երեք խմբերում երկու մեթոդիկաների կիրառության արդյունքում, ըստ ստացված տվյալների, կարելի է տալ նրանց բնորոշ ընդհանուր բնութագիրը՝ հիմնվելով նրանց՝ կյանքի և մահվան նկատմամբ վերաբերմունքի վրա:

1. 90-ականների պատերազմի մասնակիցներին բնորոշ է կյանքի նկատմամբ իմաստավորված, նպատակային կողմնորոշում՝ հիմնված անձնական վերահսկողության և հաղթանակի փորձի վրա: Մահվան նկատմամբ նրանց վերաբերմունքն առանձնանում է ֆիզիոլոգիական վտանգի հանդեպ գերզգայունությամբ (ցավ, սթրես), սակայն կյանքի իմաստի զգացումը հանդես է գալիս որպես պաշտպանական մեխանիզմ: Նրանք առանձնանում են ուժեղ ինքնաարդյունավետությամբ՝ հաղթանակի և կյանքի փորձի շնորհիվ:

2. 44-օրյա պատերազմի մասնակիցների՝ կյանքի նկատմամբ վերաբերմունքը հիմնականում կենտրոնացած է ներկա պահի վրա: Կյանքի իմաստը կապված է կոնկրետ գործողությունների հետ, այլ ոչ թե երկարաժամկետ նպատակների: Մահվան նկատմամբ վերաբերմունքը կարելի է բնորոշել որպես մահվան մասին ինտրուսիվ մտքեր և ֆիզիկական

վնասվածքների հանդեպ անհանգստություն: Նրանք առանձնանում են գոյատևման մոտիվացիայով՝ պայմանավորված թարմ տրավմայով:

3. Պատերազմին չմասնակցած զինծառայողներին բնորոշ է կյանքի նկատմամբ վերաբերմունքի մեջ կայունություն և կառավարելիություն՝ առանց տրավմատիկ փորձի ազդեցության: Կյանքի իմաստը կապված է կյանքի ընթացքի օպտիմիզացման հետ: Մահվան նկատմամբ վերաբերմունքը կարելի է բնորոշել որպես էքզիստենցիալ անհանգստություն՝ կապված ժամանակի սահմանափակության և անձնական նվաճումների բացակայության հետ: Նրանց բնորոշ է կայունություն՝ առանց անձնական ներուժի շեշտադրման:

Եզրակացություն

Այսպիսով՝ զինծառայողների հետազոտված յուրաքանչյուր խումբ բնութագրվում է կյանքի և մահվան նկատմամբ վերաբերմունքի յուրահատուկ մոդելով, որը պայմանավորված է պատերազմական փորձի առկայությամբ/բացակայությամբ, տարիքային և սոցիալ-հոգեբանական գործոններով:

Մահվան անհանգստության տարբեր գործոնների բարձր ցուցանիշները 44-օրյա պատերազմի մասնակիցների, 90-ականների պատերազմի մասնակիցների և պատերազմի չմասնակցած, բայց զինվորական ծառայություն անցած անձանց մոտ արտացոլում են նրանց պատերազմի և կյանքի հետ ունեցած տարբեր փորձառությունները:

44-օրյա պատերազմի մասնակիցների մոտ մահվան մասին կոգնիտիվ-աֆեկտիվ մտահոգվածության և ֆիզիկական փոփոխությունների նկատմամբ անհանգստության բարձր մակարդակը կարող է պայմանավորված լինել պատերազմի ժամանակ ապրած սուր սթրեսով, կյանքի և առողջության նկատմամբ սպառնալիքների անմիջական ընկալմամբ: Սա խոսում է նրանց մոտ հետտրավմատիկ մտածողության և տագնապային հակումների հնարավորության մասին:

Պատերազմին չմասնակցած, բայց զինվորական ծառայություն անցած անձանց մոտ ժամանակի ընթացքի գիտակցման բարձր մակարդակը կարող է կապված լինել ռազմական կարգապահության, կյանքի անցողիկության մասին մտածելու և ապագայի պլանավորման անհրաժեշտության հետ: Նրանց անհանգստությունը մահվան վերաբերյալ կապված է ժամանակի արագության գիտակցման հետ, ինչը կարող է խթանել գոյաբանական վախերը:

90-ականների պատերազմի մասնակիցների մոտ ցավի և սթրեսի նկատմամբ մտահոգվածության բարձր ցուցանիշները վկայում են այն մասին, որ նրանց մահվան վախը հիմնականում կապված է ֆիզիկական և հոգեբանական տառապանքի հեռանկարով: Սա կարող է պայմանավորված լինել պատերազմի ընթացքում ֆիզիկական վնասվածքների և հոգեբանական ծանր ապրումների հետ, ինչը ձևավորել է նրանց մոտ հատկապես ցավալի մահվան մտավախություն:

Մարտական գործողություններին մասնակցությունը փոխում է անհատի վերաբերմունքը կյանքի և մահվան նկատմամբ: Այս փոփոխությունների ուղղությունը կախված կլինի մարտական գործողություններին մասնակցելու հետ կապված հոգեբանական փորձը ինտեգրելու անհատի կարողությունից, ինչպես նաև մարտական գործողություններին մասնակցելու իր դիրքորոշումից:

Կյանքի և մահվան նկատմամբ վերաբերմունքը ներկայացնում է համակարգ, որի հիմնական հուզական և ռացիոնալ բաղադրիչներն են՝ կյանքի և մահվան ընդունման մակարդակը, ինքնադրստորումը, իմաստի տեսլականը, պատասխանատվությունը, աճի ձգտումը, մահվանը որպես վերջնական ավարտի մասին պատկերացումը:

Մահվան ընդունումը ներկայացնում է անձնային աճի հավանական տարր մարտական գործողություններին մասնակցելուց հետո: Մարտական գործողություններին մասնակցությունը էքզիստենցիալ մարտահրավեր է, որը կարող է ճիշտ աջակցության դեպքում դառնալ անձի վերափոխման աղբյուր, ոչ միայն վնասվածքի:

Ընդհանուր առմամբ, այս տվյալները ցույց են տալիս, որ պատերազմի հետ անմիջական առնչություն ունեցող խմբերում մահվան անհանգստության գործոնները տարբեր կերպ են արտահայտվում՝ կախված պատերազմի բնույթից, անձնական փորձից և դրա հոգեբանական հետևանքներից:

Ստացված տվյալների, դրանց հոգեբանական վերլուծության և եզրակացությունների հիման վրա կարելի է առաջ քաշել հետևյալ գործնական առաջարկները.

- 44-օրյա պատերազմի մասնակիցներին անհրաժեշտ է հոգեթերապևտիկ աջակցություն՝ կյանքի իմաստի վերականգնման և մահվան անհանգստության կարգավորման համար,
- 90-ականների խմբի համար կարևոր է ֆիզիոլոգիական վտանգի գերզգայունության հաղթահարումը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-292>

Գրականություն

1. «Հայրենիքի պաշտպանի» և «մարդասպանի» անհատական հոգեբանական առանձնահատկությունները զինծառայողի ընկալման մեջ // Գիտական Արցախ. – 2021. – No. 1(8). – P. 221-227. – DOI 10.52063/25792652-2021.1-221. – EDN YHKQBH.
2. Гаврилова Т. А. Экзистенциальный страх смерти и танатическая тревога: методы исследования и диагностики. Прикладная психология. 2001, № 6, с. 1-8.
3. Голоденко О. Н. Изучение особенностей смысловой сферы у военнослужащих при посттравматическом стрессовом состоянии. Журнал психиатрии и медицинской психологии, 2023, № 1(61), с. 37-49.
4. Зелянина А. Н., Падун М. А. К проблеме посттравматического личностного роста: современное состояние и перспективы. Том 10, No. 53, 2017, с. 2-3.
5. Караяни А. Г., Сыромятников И. В. Прикладная военная психология. Санкт-Петербург, 2006, с. 178, 480 с.
6. Леонтьев Д. А. Тест смысложизненных ориентаций, 2-е изд. Москва: Смысл, 2000, - 18 с.
7. Литвинцев С. В., Снедков, Е. В., Резник, А. М. Боевая психическая травма. Москва: Медицина, 2005, - 432 с.
8. Флюорович Ш. Р. ПТСР у военнослужащих. Москва, с. 1-3.
9. Франкл В. Человек в поисках смысла. Москва: Прогресс, 1990, 368 с.
10. Templer D., (1970). The construction and validation of a death anxiety scale. Journal of General Psychology, 82, p.165-177.

Особенности осмысленных жизненных ориентиров и отношения к смерти у участников боевых действий

*Авагимян Айк,
Саргсян Мане,
Ганадян Аветик*

Резюме

Ключевые слова: экзистенциальные ценности, смысл жизни, боевой стресс, травматический стресс, участники войны, личностный рост

Цель статьи – раскрыть, как опыт войны влияет на формирование индивидуальной системы ценностей, понимание смысла жизни и психологическое отношение к смерти. Актуальность исследования обусловлена тем, что поиск жизненного смысла и формирование отношения к смерти у участников боевых действий играют важную роль в их психологичес-

ком благополучия и психосоциальной адаптации. Понимание этих процессов способствует разработке эффективных методов психологической поддержки и повышению качества жизни ветеранов.

Задачами исследования являются выявление особенностей формирования осмысленных жизненных ориентиров у участников боевых действий, изучение их отношения к смерти и психологических факторов, влияющих на него, а также анализ взаимосвязи между смыслом жизни и отношением к смерти в контексте боевого опыта.

В исследовании использовались методы психологического тестирования, а также качественного и количественного анализа. Основными инструментами стали методика диагностики «Осмысленность жизни» Д. А. Леонтьева и шкала тревожности смерти Темплера.

Результаты показывают, что боевой опыт нередко приводит к переосмыслению жизненных ценностей и смысла жизни, тогда как отношение к смерти может варьироваться от принятия до тревоги или безразличия.

Peculiarities of Combatants' Attitude Towards Meaningful Life Orientations and Death

*Avagimyan Hayk,
Sargsyan Mane,
Ghanadyan Avetik*

Summary

Key words: *existential values, meaning of life, combat stress, traumatic stress, war participants, personal growth*

The aim of the following article is to examine how combat experiences shape individual value systems, perceptions of life meaning, and psychological attitudes toward death. This research is relevant because the search for life meaning and formation of attitudes toward death play a critical role in combatants' mental well-being and post-war social integration. It also helps identify effective methods of psychological support, contributing to adaptation and improved quality of life.

The study objectives are to identify the features of meaningful life orientations among combatants, examine their attitudes toward death and related psychological factors, analyze the interaction between life meaning and attitudes toward death in the context of combat experience.

The research employed psychological testing as well as qualitative and quantitative analyses. Key instruments included D. Leontiev's "Meaningful Life Orientations" methodology and Templer's "Death Anxiety" scale.

The findings indicate that combat experience often leads to a reevaluation of life meaning, while attitudes toward death vary from acceptance to fear or indifference. Understanding these processes can support faster post-traumatic recovery and promote personal growth by transforming traumatic experiences into constructive insights.

Ներկայացվել է 25. 05. 2025 թ.
Գրախոսվել է 15. 09. 2025 թ.
Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.